


20.552

ԾՐԱԳԻՐ
ԿԱՆՈՆԱԳԻՐ



Ռ. Ռ. Մ Կ Ս. Վ. Ա. Բ
Ա Զ Ա. Տ Ա. Կ Ա. Ն
ԿՈՒՄԱԿՑՈՒԹԵԱՆ



1935

Ցպարան ՍՍՀԱՀ-ՄԵԽՈՊ Գահիքէ

329.14

Թ-18

ԾՐԱԳԻՐ
ԿԱՆՈՆԱԳԻՐ



Ա. Ա. Մ Կ Ա. Վ. Ա. Բ
Ա. Զ. Ա. Տ Ա. Վ. Ա. Ն
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ



1935
Տպարան ՍԱՀԱԿ-ՄԵՄՐՈՊ Գահիքէ



18.02.2014

20.552

Հ Ա Յ Թ Ա Խ Թ Ի Ւ

Ն Ե Բ Ա Ծ Ո Ւ Թ Ի Ւ

Ռամիկավար Ազատական Կուսակցութիւնը, հարազատ ծնունդ հայ ժողովուրդի եւ քարգման անոր տոնիկի ինքնապահպանման բնազդին, ազգային ազատագրութեան կը ձգտի Ֆիզիկական գոյութեան եւ սնէսական ու մշակութային գարգացման համբով ու համերաշխ նիզով, ու այդ պատճառով եւս կը մերժի եւ հայ իրականութեան ալ խորք կը նկատէ դասակարգային պայքարները կամ այլ խորութիւնները:

Այդ նամբուն վրայ, Ռամիկավար Ազատական Կուսակցութիւնը իր նօքրիս արժեկով կը գնահատէ, դարեր ամբողջ ակնկալուած Քաղաքական ներկայ քանիկազին իրողութիւնը որ գոյութիւնն է Հայ Պետութեան, Հայ Հողին վրայ, հոծ հայ ազգաբնակչութեամբ։ Ներկայի այս իրականութիւնը կը պահանջէ համապատասխան զիտակից Քաղաքական ըմբռնում եւ քաղաքացիական դասիարակութիւն։

Հաւատարմօնէն եւ բոլորանուեր ծառայելով Հայ Պետութեան գօրացման եւ զարգացման, Անոր մէջ հայ ազգը պատրի փրեսրուել իր գոյութեան ապահովութեան եւ ազգային մեր պատմական եւ անժօղելի իրաւունքներուն իրագործումին Քաղաքական խարիսխը, որուն գուրգուրանեով պարտին կառչած մնալ։



(66-90)

1295-91

Ռամկալար Ազատական Կուսակցութիւնը հետապնդելով հանդերձ այս քաղաքական դրապահ ու հայրենասիրական ուղղութիւնը, չի հրաժարիր ազատ հնագատութեան իր իրաւունքին հանդեպ այն ընկերային իրաւակարգին, որ Հայ Պետութեան սահմաններուն մեջ կը կիրարկուի այժմ։

Մեր Կուսակցութեան յնկերային աշխարհայեացքը կը հիմնուի ժողովուրդի վեհապետութեան սկզբունքին վրայ, անհատական ու հաւաքական բնական իրաւունքներու կիրարկումով եւ բարերջման եղանակով։

Ռամկալար Ազատական Կուսակցութիւնը չի բամեներ գաղութանալութիւնը հայրենի հողին կառչած հայութենեն. ու կապելով գաղութանալութիւնը Հայ Պետութեան եւ Հայենիքին, միեւնոյն ժամանակ կը ծառայէ քէ՝ մեկին եւ քէ միւսին զօրեղացման ու ինքնապահպանման, փոխադարձ ներենչումներով եւ օճանդակութեամբ։

Գաղութանալութեան ինքնապահպանումի եւ ազատ բարգաւաճումի նոյն մտանգութեամբ և նաեւ որ Ռամկալար Ազատական Կուսակցութիւնը գաղթաշխարհի մեջ կը ձգտի հայ զանգուածները հաւատարի պահել հիւրենիկալ օսար երկիրներու եւ պետութեանց օրենքներուն եւ ժամերուն։

ԾՐԱԳԻԲ ՌԱՄԿԱԼՈՐ ՍԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ՆՊԱՏԱԿ

Ռամկալար Ազատական Կուսակցութեան նպատակն է՝

Ա.— Ժաղալրդային կամքի գերիշխանութիւնը և ռամկալար ազատական սկզբունքներու կիրարկումը հայ պետական եւ համարային կեսնքին մէջ։

Բ.— Հայաստանի պետութեան զարգացումն ու բարգաւաճումը։

Գ.— Արաւասահմանի հայ զանգուածներուն հայրենի հողի վկայ հաւաքումը։

Դ.— Հայոց թուրքիայ մէջ ունեցած իրաւունքներուն և շահերուն հետապնդումը։

Ե.— Հայաստանի եւ Գողութեաներու միջեւյարտերութեանց ամրապնդումը։

Զ.— Գաղութներու ֆիզիքական եւ արևահասական զարգացումն ու անոնց մէջ հայկական մշակոյթի պահպանումն ու զօրացումը։

ԳԼՈՒԽ Ա.

Քաղաքական Սկզբունքներ

Յօդուած 1.— Կուսակցութիւնը հիմնը և լաւագական իրաւունքներու հո-

ւասարութեան սկզբունքին վլրոյ եւ չի ճանչնար գտասակարգային ուեւէ սաւաննաշնորհում:

Յօդ. 2.— Հայուսատանի կասառլարութեան ձեւ կ'ընդունուի Ռոմեակավարական Հանրապետութիւնը, Օրէնսդրական Դաստիարական եւ Գործադիր Իշխանութեանց բաժանումներով:

Գլուխ Բ.

Սահմանադրական Երաշխաւորութիւններ

Յօդ. 3.— Ամէն քաղաքացի բացարձակապէս հաւասար է օրէնքի տուշեւ:

Յօդ. 4.— Ամէն քաղաքացի կը վայելէ քուէարկութեան հաւասար իրաւունք 20 տարեկանէն սկսեալ, ասանց սեսի խարութեան:

Յօդ. 5.— Ներկայացուցչական բոլոր մարմիններու ընտրութիւնը կը կասառուի ընդհանուր, հաւասար, ուղղուկի և գաղանի քուէարկութեամբ:

Յօդ. 6.— Զինուօրսական կրթութիւնը պարտաւորիչ է Հայուսատանի մէջ:

Յօդ. 7.— Հայերէնը պետական պաշտօնական լիգուն է: Փոքրամանութեանց մշտակութային տեսակէտով՝ ինքնուրոյն դիմագիծը կը ճանչցուի:

Յօդ. 8.— Նախակրթութիւնը ընդհանուր, ձրի և պարտաւորիչ է: Երկրուգական և համալրամանական կրթութեան համար

պետութեան կողմէ կը հայթայթուին դիւրութիւններ ընդունակ աշակերտներուն:

Յօդ. 9.— Ազատութիւն խօսքի, մամոււի, ինդրագրի (répetition), հանրագրութեան, հաւաքումներու, ընկերակցութեան և ճամբարդութեան:

Յօդ. 10.— Ազատութիւն խղճի, կրօնքի և պաշտամունքի:

Յօդ. 11.— Անձնումինի իրութիւն անձի, անրանուրելիութիւն բնակարանի, սատցուծքի և նամակի:

Յօդ. 12.— Վարչական պավակեդրոնացում պետութեան հիմնական օրէնքներուն համաձայն:

Գլուխ Գ.

Ընկերային եւ Տնտեսական Սկզբունքներ

Յօդ. 13.— Աեփականաւթեան իրաւունքը կը նկատուի իրեն արդար վայելումը աշխատանքի և խնայողութեան: արդիւնքին: Ժամանակական իրաւունքը կը յարգուի որոշ սեղմումներով և հարկային պարտագրութեամբ՝ ի նպաստ պետութեան:

Յօդ. 14.— Անհատական ձեռներէցութիւնը կը քաջալիրուի իրեն իթան յառաջդիմութեան և անհատին ու համայնքին վիճակին բարելումն: Զարգացման հաւասար պատեհութեան կը արուի բոլոր քաղաքացիներուն համար:

Յօդ. 15.— Ընտանիքը կը նկատուի հիմ
ընկերութեան և օրէնքով կը սահմանաւոր-
ուին ամուսնութեան, այլ-կնոջ վոխտպարձ
իրաւունքներուն և պարտականութեանց,
զաւուկներուն հանդէպ անոնց պարտաւորու-
թեանց և ընտանիքան ստացուածքի սեփա-
կանութեան խնդիրները :

Յօդ. 16.— Քորոր քաղաքացիներուն
կապահովուի արգորութեան գործադրու-
թիւնը պատութեան ընկերացին և տնտեսական
կեանքին մէջ :

Յօդ. 17.— Հիմնարկութիւն պետական և
վարկային գրամատառներու՝ ընծայելու հա-
մար գիւրամատչելի վարկ քաղաքացիներուն:

Յօդ. 18.— Կանոնաւորում՝ օրէնսդրո-
ւան միջոցներով՝ աշխատութեան և գրամա-
գլուխի փոխադարձ յարաբերութիւններուն:

Յօդ. 19.— Արդար և համերաշխ գոր-
ծակցութիւն և շահակցութիւն գրամագլու-
խի և աշխատութեան միջեւ, աշխատանքի
վլէճներուն լուծումը՝ հաշտարար տականներու-
միջոցաւ:

Յօդ. 20.— Պետական վերհսկողութիւն
աշխատանքի ժամերու, վարձատրութեան չա-
փի, գործավայրերու առողջապահուածուն պայ-
մաններու և կանոնց ու անշափահաններու
աշխատութեան պայմաններուն վրայ:

Յօդ. 21.— Հաստատում պետական գրա-
սենակալներու (պիւրօ)՝ իբրեւ միջնորդ գոր-
ծատիրոջ և գործատորի միջեւ, անգործե-

րու աշխատանք հայթայթելու համար :

Յօդ. 22.— Պետական ապահովագրու-
թիւն՝ պաշտպանելու համար ամէն կարգի աշ-
խատաւորները ընդգէմ անգործութեան, հե-
ւանդութեան, արկածի, ծերութեան և մա-
հուան :

Նոյնպէս՝ ապահովագրութիւն ընդգէմ
բնական պատահարներու, ինչպէս երաշտ,
հեղեղ, կարկուտ, եւայլն:

Յօդ. 23.— Օրէնսդրական մասնաւոր մի-
ջոցներով քաջալերել և պաշտպանել երկրա-
գործութիւնը և աւանին ճարտարարուեստը:

Յօդ. 24.— Պետութեան կը պատկանի
հանքերու, սննդաներու, ջուրերու և ուրիշ
բնական հարստութիւններու արդիւնագործու-
մը :

Կառավարութիւնը կրնայ՝ իր վերհսկո-
գութեան առկ՝ անոնց շահագործումը առկ
սննդաներու կամ ընկերութեանց, որոշ ժա-
մանակաշրջանի համար:

Յօդ. 25.— Պետականացում թղթատա-
րութեան, հետագրի, հետախօսի, երկաթու-
զային և փոխագրական միջոցներու, ջրանցք-
ներու և ելեկտրոկայաններու:

Յօդ. 26.— Քաղաքապետութեան կը
պատկանի հանրակառաքերու, լոյսի և ջուրի
մասնակարարութիւնը:

Քաղաքապետութիւնը կրնայ տառնց
մենաշնորհը առկ սննդաներու կամ ընկերու-

թեսնց, որոշ ժամանակաշրջանի համար:

Յօդ. 27.— Քաջալերում արտադրական և սպառզական համագործակցական (COOPÉRATIF) ընկերութիւններու կողմանիերպումին և ծառալման:

Յօդ. 28.— Արդար բաշխում պետական տուրքերու, որպէս զի չջախոտուին անհատական ու ընկերակցական ձեռներէցութիւնը և երկրին արդինարերական ու առեւտրական գործունէութիւնը:

Յօդ. 29.— Յառաջատուական տուրք երամուտի և ժառանգութեան վրայ. իսկ համեմատական միօրինակ առարք՝ հողի և կալուածի արժէքին վրայ:

Յօդ. 30.— Աստիճանական ջնջում անուղղակի առերքերու:

Գլուխ Գ.

Հողային Հարց

Յօդ. 31.— Հողին անհատական սեփականափրութիւնը կը սահմանաւորուի Խորհրդարանին կողմէ քուէտրկաւծ հողային օրէնքներու համաձայն:

Յօդ. 32.— Հողային սեփականաւորութեան իրաւունքը կը պայմանաւորուի և կը սահմանափակուի հողին մշակութեամբ և արդինարգութեամբ:

Պետութիւնը կրնայ երկրի արդինարե-

րական գորգացման համար ընկերութիւններու և միհամներու տալ որոշ չափէն աւելի հողեր:

Յօդ. 33.— Հողադուրկ և սակաւահող գիւղացիներու ձրիստր հող կը արտեւի պետական տիօրինութեամբ, հողային ընդհանուր օրէնքի համաձայն:

Յօդ. 34.— Հողային բաշխման չափանիշը (հօրմա) կ'արտօնուի անդական պայմաններու, հողին սրակին և աշխատութեան չափին համամատ:

Յօդ. 35.— Պետութիւնը իրաւունք ունի գրաւելու անհամաներու և ընկերութիւններու սեփական այն հողերը և անշարժ ստացւուծքները, որոնք անհամանեց են հանրօգութ նըստասակներու համար, արդար հասուցաւմ ընկերվ անսնց աէրերուն:

Յօդ. 36.— Գիւղերու համար սահմանել հասարակաց գործածութեան յատուկ արօաստեղիներ և անհամաներ, և ապահովել անոնց անձեւամիսել ութիւնը:

Գլուխ Ե.

Կրրուրիւն և Մշակոյր

Յօդ. 37.— Մզում տալ ժողովուրդի զարգացման և անոր ինքնատիպ մշակոյթին, դպրոցներու, համալսարաններու, լաբորաններու, հանրային ձրի դասախոսութիւններ:

րու և գրադարաններու հստառասումով։

Յօդ. 38.— Հաստատել վարժակետա-
նոցներ, երկրագործական և արհեստագիտա-
կան վարժարաններ։

Յօդ. 39.— Պաշտպանել և քաջալերել
գեղարվեստները։

Յօդ. 40.— Փնտառել, հաւաքել և պահել
հայկական ամէն կարգի հսութիւնները։

Յօդ. 41.— Քաջալերել գիտուկոն խու-
զարկութիւնները։

Ա. Երաբննուրիւն

Ներկայ Ծրագիրը վերաքննելի է Կու-
սակցութեան Ընդհանուր Պատգամաւորական
Ժողովին կողմէ՝ Հիմնական Կանոնագրի ար-
քամագրութեան համաձայն։

ՀԱՄԱԿԱՐԱԿՈՒՅԹԻՑ ԿՈՆՍՈՒԹԵԱՆ

Ո.Ա.ՄԿԱՎՈՐ ԱԶՈՏՈԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

Բառմկալար Ազատական Կուսակցու-
թեան կողմակերպական բաժանումներն են՝
Ա. Տեղական Ակումբներ և իրենց
Վարչութիւնները։

Բ. Շրջանակներ և Շրջանային Վար-
չութիւններ։

Գ. Կեդրոսական Վարչութիւն։

Ե. Ընդհանուր Պատգամաւորական Ժո-
ղով։

Ընդիանուր Կանոններ

Յօդ. 1.— Խւրաքանչիւր շրջանակ ինք-
նավոր է ներկայ Կանոնագրով ճշգուտծ խ-
րառառութիւններու սահմանին մէջ։ ունի
տեղական պարմաններու յարմարցումն Ներ-
քին Կանոնագրիր մը, որ հիմնական կէտերու
մէջ կը համաձայնի այս Կանոնագրի արա-
մագրութիւններուն։

Յօդ. 2.— Կուսակցութեան բոլոր պաշ-
տօնական մարմինները, Ակումբէն մինչեւ
Ընդհանուր Պատգամաւորական Ժողովը, պէտք
է պահեն իրենց որոշումներուն և յարաբե-

րութեանց արձանագրութիւնները, դիւնանէն ստորագրուած։

Յօդ. 3.— Պաշտօնական մարմիններու դիւնանները աւանդապահն են Կուսոկցութեան առմարներուն, թղթակցութիւններուն, պայմանագրութիւններուն և կնիքին։

Յօդ. 4.— Բոլոր վարչական մարմիններու և դիւնաններու ընարութիւնը կը կատարուի գողանի քուէտրկութեամբ։

Անդամները վերընարելի են, երբ օրինական արգելք չկայ։

Յօդ. 5.— Ըստրութիւններու տակն մինչեւ վերջը ամիսը իր անդամասուրքը առանց բանաւոր պատճառուի չլծարազ անդամ մը ընտրող և ընտրելի ըլլալու իրաւունք չունի։

Յօդ. 6.— Ըստրութիւններու հիմք կը ծառայէ անդամներու ամբողջական թիւը, զանց չառնելով չվճարովները, որոնց անունները օրինաւորապէս դուրս ձգուած չեն անուսանացնելու։

Յօդ. 7.— Անվասանութեան քսէները և կոխակայման որոշումները ո՛ւելէ մարմիններու ամբողջութեան թիւին մեծամանութեամբ միայն կը արուին, իսկ արտաքսումի վերաբերեալ դատական վճիռները՝ երեք չորրորդի քուէով։

Յօդ. 8.— Կուսակցութիւնը իր սովորական պիւտէէն զատ, պէտք է ունենայ իր

հիմնագրամը, որմէ գոյացած ասկոսին և ինարկին մայր-գումարին գործածութիւնը կ'որոշուի Ընդհանուր Պատգամամաւորական Ժողովին կազմէ։

Յօդ. 9.— Կուսակցութեան բոլոր պատասխանատւ մարմինները կը ստորագրեն երգմանագիր մը, որուն բանաձեւը կը խթմբագրաւի Ընդհանուր Պատգամամաւորական Ժողովին կազմէ։

Յօդ. 10.— Ռոմեկավոր Ազատական Կուսակցութեան խորհրդանիչն է Արարտափերկու կոստալները, մէջանելը նորածագ արեւով մը, կապոյտ պատասխանի վրայ։

Գլուխ Ա.

Անդամագրութիւն

Յօդ. 11.— Ռոմեկավոր Ազատական Կուսակցութեան կրնայ անդամակցիլ, առանց ուռի խարութեան, 18 տարեկանէն վեր ամէն Հայ, որ կ'ընդունի այս Կուսակցութեան սկզբունքները։

Յօդ. 12.— Նոր անգամ կ'ընդունուի Ասկումբի Վարչութեան ժողովին մեծամանութեան որոշումով, համաձայն այդ մասին շրջանագիր ներքին Կոնսոնագրի արամագրութեան։

Ընդունուած անգամը պէտք է ստորագրէ խոստանագիր մը և ընէ հետեւեալ ուխ-

տը Ակումբին անդամական ժողովին մէջ,
նախքան իր մասնակցութիւնը ժողովին.

Ուխա Նորագիր Անդամներու

«Կուխտեմ խոնիս եւ պատույս վրայ
յանուն ազատութեան եւ Հայրենիքի բոլոր
նուիրական սրբութիւններուն, ծառայել Ռամ-
կավար Ազատական Կուսակցութեան սկրզ-
բուններուն, որդեգրելով անոր դաւանած
ազգային եւ բաղաբական նպատակները:

«Կուխտեմ այս վեհ վայրկեանեն սկրս-
եալ հաւատարիմ անդամ մը ըլլալ Ռամկա-
վար Ազատական Կուսակցութեան եւ խոնիր-
սուն ու կարգապահութեամբ կատարել իմ
վրոյ գուլած բոլոր պարտականութիւնները,
նուիրելով իմ նիւ քական եւ բարոյական
կարողութիւններս Կուսակցութեան նպատակ-
ներուն իրագործման համար:

«Ենթաւում ամեն զնոնդութեամբ եւ ի
հարկին կեանեիք զնով նուիրուիլ կուսակ-
ցութեան, ազգին եւ հայենիքին սուրբ դա-
տին հաւատարիմօնի պահելով ինձի վսահ-
ուած գալտնիքները:»

Յօդ. 13.— Իւրաքանչիւր անդամ կ'ու-
նենայ Շրջանային Վարչութենէն պատրաս-
տուած անդամաքարտ մը, իր լուսանկարը
կրող:


Յօդ. 14.— Իւրաքանչիւր անդամ բո-
րոյսկան պարասուորտութեան առկ կը գանուի
ընկերական համակարանքի և սիրոյ վերաբե-
րում ցոյց տալու Կուսակցութեան բոլոր
անդամներուն հանդէպ: Այս պարասուորտ-
ութեան հակառակ վերաբերմունք և ուրիշ
անդամներու հանդէպ վարկարեկող վար-
մունքը պատասխանառութեան կ'ենթար-
կեն անդամ մը:

Յօդ. 15.— Կուսակցութեան անդամ չեն
ընդունուիր անսոնք, որ Ա. Ուրիշ հայ քա-
ղաքական կուսակցութեան մը անդամ են.
Բ. Ուրիով և զնզդումով դատապարտառած
են. Գ. Ծանօթ են իրը յստի նկարագրի տէր
անձեր:

Յօդ. 16.— Կուսակցութեան ոյր ան-
դամները կը վճարեն տարեկան անդամա-
տուրք մը, որուն նուտպագոյն քանակը կ'ո-
րոշուի շրջանակին Պատգամառութեան Ժո-
ղովին կողմէ, և կը յստիկցուի մասամբ
Շրջանակին և մասամբ ալ կեզրոնական
անուուկին:

Տեղական ծախքերու հայթայթման հա-
մար Շրջանակներու Կանոնագիրները կ'ու-
նենան անհրաժեշտ տրամադրութիւնները:

Կիներէ և ուսունացներէ կազմուած Ա-
կումբները իրենք կ'որոշեն անդամանթարք
քանակը, և կը մասակարտեն զայն այս տող-
ուածի արամագրութիւններուն համաձայն:



Յօդ. 17.— Նոր անդամները, Յօդ. 16 բդի
մէջ յիշուած անդամասուրքէն զատ, պար-
տին վճարել նոտեւ մուտքի տուրք մը, սրուն
քանակը իրենք կ'որոշեն:

Յօդ. 18.— Անդամասուրքէ զերծ են
այս անդամները, որոնց նիւթական վիճակին
թոյլատու չըլլալը կը հասանառուի իրենց
Ակումբին Վարչութեան կալմէ:

Յօդ. 19.— Յնակութեան հետեւանքով
անդամ մը իր պատկանած Ակումբէն կրնաց
ուրիշ Ակումբ մը փոխադրուիլ, Վարչու-
թեան գրաւոր յանձնարարականով:

Յօդ. 20.— Իւրաքանչիւր անդամ միայն
մէկ Ակումբի կրնայ անդամակցիլ և միայն
մէկ ձայնի իրաւունք ունի:

Յօդ. 21.— Ամէն անդամ պարտի յոր-
դել կորդապահութեան օրէնքները:

Յօդ. 22.— Ուե՛ւէ անդամ որ չի հնա-
գոնդիր իր Ակումբին որոշումներուն, կամ
չի վճարեր իր տուրքերը և կամ կ'ունառ-
կոխէ Կուսակցութեան օրէնքները, ազգա-
րութիւնը ապարգիւն մնայ, պատոյ կ'հն-
թարկուի Շրջանակին Ներքին Կանոնագրին
արամադրութեանց համաձայն:

Յօդ. 23.— Ուե՛ւէ անդամ որ՝

Ա. Կուսակցութեան սկզբունքներուն
դէմ կը գործէ,

Բ. Կորդապահութեան օրէնքները չի
յարգեր,

Գ. Իրեն գէմ արուած վճիռի մը գէմ
ներքին օրինական միջոցներէ ապարգեր մի-
ջոցներու կը գիմէ,

Դ. Ուրիշ հայ կուսակցութեան մը եւս
կ'անդամակցի,

Եր Ակումբին անդամական ժողովին
վճիռով կը կախակայուի և կը կորանցնէ իր
անդամական իրաւունքները, որոշուած ժա-
մանակի մը համար, և ի հարկին կ'արատք-
ութիւն յետ գասալուրութեան:

Յօդ. 24.— Ուե՛ւէ անդամ որ Կուսակ-
ցութեան մէկ ուրիշ անդամը հրապարակով
կը զրաբրուէ, զրափարաւած անդամին դի-
մումին վրայ յիս քննութեան կը պատճռուի,
յարմար տեսնուած պատիժով մը, որ կրնայ
ըլլու մինչեւ կախակայութ և արտաքսում,
ըստ ասաիծանի:

Յօդ. 25.— Ոճիրով և զեղծումով դա-
տապարաւուած անդամ մը կ'արատքուի Կու-
սակցութենէն իր Ակումբին վճիռով:

Յօդ. 26.— Արտաքսուած անդամի մը
անունը կը հաղորդուի Կուսակցութեան բո-
լոր Ակումբներուն՝ գերադաս մարմիններուն
միջոցու:

Յօդ. 27.— Տրուած վճիռէ մը դժգոհ
ուեւէ կողմ կրնայ Ակումբին անմիջական

գերազանցաւ մարմնին բազովիլ, վճռին թուաւ-
կանէն մինչեւ մէկ տարի:

Յօդ. 28.— Բոլոր պատասխանառու մար-
մինները, սկսեալ Ակումբի Վարչութիւննե-
րէն մինչեւ Կեղք. Վարչութիւնը, պարտա-
ւոր են ներկայ Կանոնագրի տրամադրու-
թիւններուն հակառակ գործող կամ թերա-
ցող անհասա անդամներու և իրենցմէ ստո-
րագաս մարմիններու հանգէպ անմիջական
ազգու անօրինութիւններ ընել: Այս մասին
գանցառութիւնը ծանր պատասխանառուուու-
թիւն կը հրաւիրէ վերոցիշեալ իրաւուու
մարմիններուն վրայ, կուսակցուկան կար-
գուպահութեան և կուսակցուկան վերին շա-
հերուն դէմ մեղանչում մը նկատուելով:

Յօդ. 29.— 25 տարի անընդհանա կու-
սակցութեան ծառայողները կը հռչակուին
«վեթերոն» անդամ և անոնց կը տրուի
մասնաւոր շքսնչան:

Գլուխ Բ.

Ակումբներ

Յօդ. 30.— Նուազագոյն հինգ անդամնե-
րու խմբաւորումը կը կազմէ Ակումբ մը:

Յօդ. 31.— Նորակազմ Ակումբի մը գո-
յութիւնը օրինաւոր կը ձանցցուի այս տաեն
միայն, եթբ իր կազմութիւնը կը վաւերաց-
ուի Շրջանային Վարչութեան կողմէ:

Յօդ. 32.— Տեղական պայմաններու հո-
մանաս, կիները կրնան տաւանձին Ակումբներ
ունենալ, տաւանձին Վարչութիւնով:

Յօդ. 33.— Իւրաքանչիւր Ակումբ կ'ու-
նենոյ 3—7 անդամներէ բազկացեալ Վար-
չութիւն մը, որ կը պաշտօնավարէ մէկ տա-
րի և մինչեւ իր յաջորդին ընտրութիւնը:

Ֆանօր.— Ցիստնէն վեր անդամ ունեցող Ա-
կումբները իրենց Վարչութիւնէն զատ կրնան ունե-
նալ նաեւ տասնեակներու բաժանում մը, իւրաքան-
չիւր տասնեակի պեսը կը նշանակուի Վարչութիւնէն,
եւ իր պաշտօնն է: իր տասնեակի ուորքերը զանձել
եւ հոգ տանիլ որ անդամական ժողովներու յամափին:

Յօդ. 34.— Ակումբի Վարչութեան ան-
դամները իրենց ընտրութիւնէն անմիջապէս
յիտոյ, ինդհանուր Սնկամական Ժողովին
առջեւ կ'ընեն հետեւեալ ուխտը.

Ավատ Ակումբի Վարչութեան Սնդամներու

«Ասանձնելով Աւամկալար Ազատական
Կուսակցուրեան Ակումբի Վար-
չութեան անդամակցութիւնը, կ'երդնում պա-
տուոյս վրայ եւ հայեեիթիս անունով՝ հաւա-
սարիմ մեալ Աւամկալար Ազատական Կու-
սակցուրեան Ազգբուժներուն եւ ազգային
ու բաղաբական նպատակներուն, գործադրել
անոր Մրագիր-Կանոնազիրը, խղնմօրէն հե-
տեւիլ Երջանային Վարչութեան որոշումնե-
րուն եւ հրահանգներուն, հայ Ազգին եւ Հայ-
ենիթին բարիթին համար»:

Յօդ. 35.— Ակումբի մը Վարչութեան պակասած անդամներաւն յաջորդները ընարելու իրաւունքը կը պատկանի անդամական ժողովին, եթէ փոխ-անդամներ չեն ընտրուած, կամ ընարուածներով հասրաւոր չէ լրացնել վարչութեան անդամներաւ թիւը։

Յօդ. 36.— Թէ՛ Ակումբի Վարչութեան և թէ անդամական ժողովին որոշումները կը տրուին ձայներու միջամտանութեամբ։

Յօդ. 37.— Ակումբի Վարչութիւնը կը վարէ Ակումբին գործերը և կը գործադրէ իր գերազան մարմնին որոշումներուն ու հրահանգները։

Յօդ. 38.— Ակումբի Վարչութիւնը հաւմարասաւ է թէ՛ անդամական ժողովին և թէ իր գերազան մարմնին

Յօդ. 39.— Ակումբի Վարչութիւնը պարաւուր է կամնաւորապէս եռամմաեայ տեղեկագրով իր գերազան մարմինը տեղեակ պահել Ակումբին անդամներաւն թիւին, եւմասկան կացութեան և ընդհանուր գործանէութեան մասին։

Այս կամնաւոր տեղեկագիրներէն զատ՝ Ակումբներու Վարչութիւնները պարաւուր են նաև իրենց գերազան մարմինը տեղեակ պահել, անմիջական տեղեկագիրներով, այնպիսի խնդիրներու մասին, որոնց ծանօթութիւնը կարեւոր և օգտակար է Կուսակցութեան համար։

Գլուխ Գ.

Անդամական ժողով

Յօդ. 40.— Առնուագն ամիսը մէկ անդամ տեղի կ'ունենայ անդամական կանոնաւոր ժողով, որուն հրաւերը գրաւորապէս կամ մամուլի միջոցու կը հազորդուի բոլոր անդամներաւն, ժողովին առնուագն երեք օր առաջ։

Յօդ. 41.— Ակումբի մը անդամական ժողովը օրինաւոր է երբ անդամներուն կէսէն մէկ առելին ներկայ է։

Յօդ. 42.— Երբ առաջին հրաւերով ժողովը միջամտանութիւն չունենայ, Վարչութիւնը կրնայ նոյն ամսուան մէջ երկրորդ հրաւեր մը ուղղել նոյն օրակարգով, երկրորդ ժողովին ներկաներուն թիւը օրինական կը նկատուի և տրուած որոշումները պարաւուրիչ են բոլոր անդամներուն համար։

Յօդ. 43.— Վարչութեան Ատենապետը, իր բացակայութեան Փոխ-Ատենապետը, անդամներու մէկ երրորդի գիմումին վրայ՝ պարաւուր է արտասավոր նիստի հրաւերել անդամական ժողով։

Յօդ. 44.— Ակումբի առքեկան ժողովը կը գումարուի Շրջանակի Պատգամաւորական ժողովին գումարման թուականէն առնուագն մէկ ամիս առաջ։

Յօլ. 45.— Ակումբի Վարչութիւնը տառեկան ժողովին մէջ կը կատարէ Ակումբի մէկ տարրուան համարատուութիւնը, որ կը տեղեկագրուի Շրջանակի Պատգամաւորական ժողովին :

Յօլ. 46.— Ակումբի տարեկան ժողովին մէջ կ'ընարուին Շրջանակի Պատգամաւուրական ժողովին պատուիրակները, Ներքին Կանոնագրի տրամադրութեանց համաձայն :

Յօլ. 47.— Կանոնց Ակումբները, եթէ հարկ համարեն, կրնան աեզտոյն Սյրերու Ակումբին հետ խառն ժողով գումարել և միասին ընարել իրենց պատուիրակները:

Յօլ. 48.— Ակումբի մը մէջ ծագած սեւէ վէճ երբ իր լուծումը չի գտներ աեզին վրայ, անմիջական գերազանց մարմնը կը միջամտէ և իր վճիռը պարաւորիչ է բոլոր կողմերուն համար, մինչեւ Շրջանացին Պատգամաւորական ժողով, ուր, կատարուած դիմումի մը վրայ, վճիռը կը քննուի :

Յօլ. 49.— Իր գերազանց մարմնին սրաշումներուն և կարգադրութեանց դէմ անսասառղ Ակումբի Վարչութիւն կը հրաժարեցուի նոյն գերազանց մարմնի կոզմէ: Հրաժարեցուցեալ Վարչութիւնն անդամները վերընարելի չեն :

Յօլ. 50.— Ակումբ մը լուծուած կը համարուի, երբ իր սրաշումներուն թիւը ու-

րոշուած նուազագոյն թիւէն պակաս է :

Յօլ. 51.— Ակումբի մը լուծման պարագային, իր գոյքերը կը յանձնուին իր ամեմիջական գերազանց մարմնին :

Գլուխ Դ.

Երջանակներ

Յօլ. 52.— Կուտակցութիւնը կը բաժնուի շրջանակներու՝ աշխարհագլուխան կամ վարչական յարմարութիւններու համեմատ:

Յօլ. 53.— Շրջանակ մը կը կազմուի մէկ կոմմ ուեւի Ակումբներէ, պայմանաւ որ տանուալն 100 անգամ ունենայ և վաւերացուի կեդր. Վարչութիւնն կոզմէ:

Յօլ. 54.— Խւրսաքանչիւր Շրջանակ տառին անգամ մը կ'ունենայ Շրջանային Պատգամաւորական ժողով, որ կը կազմուի Ակումբներու պատուիրակներէն, որոնց համեմատական թիւը կ'որոշուի խւրսաքանչիւր Շրջանակի Ներքին Կանոնագրին համաձայն :

Յօլ. 55.— Շրջանային Պատգամաւորական ժողովին պատուիրակ կ'ընարուին անսառղ միայն, որոնք ուռնուազն մէկ տարի անգամ եղած են կուտակցութիւնն : Նորակազմ Ակումբները բացառութիւն կը կազմին :

Յօլ. 56.— Շրջանային Պատգամաւորական ժողովը կը պատրաստէ նոյն Շրջանա-

կին կանոնագիրը, որ պէտք չէ հակառէ կուսակցութեան սկզբաննքներուն և հիմնական Կանոնագրին, և որ պէտք է վտակուցուի Կեդրանական Վարչութենէն:

օդ. 57.— Շրջանային Պատգամատուրական Ժողովը կը զատկի Շրջանակին վերաբերութ խնդիրներով, կը ասհմանէ ասորեկան պիւտնէն և կ'ընտրէ Շրջանային Վարչութենը :

օդ. 58.— Շրջանային Վարչութեան նորընտիր անդամները կը կոստարին հետեւեալ երդումը .

Նրգմեագիր Շրջանային Վարչութեան Անդամներուն

“Մանձնելով Ռամկափար Ազատական Կուսակցութեան Շրջանային Վարչութեան անդամակցութիւնը, կ'երգնում պատույս վրայ եւ հայրենիքիս անունով՝ հաւասարիմ մնալ Ռամկափար Ազատական Կուսակցութեան սկզբունքներուն, պահպանել եւ գործադրել անոր Շրագիր-Կանոնագիրը, խղճմօրէն գործադրել Երջ. Պատգմ. Ժողովի որոշումները եւ իր կողմէ ինձ վասանուած պահօնը, հետեւիլ Կեդրուական Վարչութեան համահներուն, աշալրջօրէն հսկել Ռամկափար Ազատական Կուսակցութեան շահերուն վրայ եւ ջանալ անոր ազգային եւ բաղադրական նպատակներուն իրազործման, Հայ Ազգին եւ Հայրենիքին համար.”

Յօդ. 59.— Խերաքանչիւր Շրջանակ Կուսակցութեան կեդրանական գանձին կը վճարէ տարեկան տուրք մը, որուն քանակը կ'արտավեհ Ծնդհ. Պատգմ. Ժողովին կողմէ, հիմնուած Շրջանակին կացութեան և նոյն Շրջանակի պատգամատուրներու անդեկտառութեան վրայ :

Յօդ. 60. Շրջանային Վարչութիւնը կը բաղկանայ տառնուազն հինգ անդամներէ, կ'ընարուի մէկ տարրուան համար և կը պաշտօնավարէ մինչեւ յաջորդին ընարութիւնը:

Յօդ. 61.— Շրջանային Վարչութեան անդամ կ'ընտրուին անոնք միայն, որոնք անդուազն երկու տարի անդամ եղած են Կուսակցութեան:

Յօդ. 62.— Շրջանային Վարչութիւնը կ'ընդունի և կը գործադրէ կեդր. Վարչութեան հրահանգները և Շրջանային Պատգմ. Ժողովի որոշումները. Կրնոյ ի հարկին թրդթակցիլ միւս Շրջանային Վարչութիւններուն հետ, աեղական բնոյթ կրող կազմուերպուկան և այլ հաստրակուկան հարցերուշուրջ, այս մասին աեղեակ պահելով կեդրուական Վարչութիւնը:

Յօդ. 63.— Շրջանային Վարչութիւնը պատասխանատու է իր Շրջանակի Պատգմ. Ժողովին, որուն պատրսի ներկայացնել իր տարեկան աեղեկագիրը և հաշիւը:

Յօդ. 64.— Շրջանային Վարչութիւնը

երեք ամիսը անգամ մը պարագաւոր է զրկել կեդր. Վարչութեան՝ իր շրջանին վիճակագրական, ելեմտական և բարոյական տեղեկագիրը։ Ասկէ զատ, Շրջանային Վարչութիւնը յաճախուկի թղթակցութիւն կը կատարէ կեդր. Վարչութեան հետ

Յօդ. 65.— Շրջանային շտրժուն և անշարժ առացուածքները մասակարարելու վերին իրաւուսութիւնը կը պատկանի Շրջանային Վարչութեան։

Յօդ. 66.— Շրջանային Վարչութեան հսկողութեան և պատասխանաւութեան ասկի կը հրասարակուի Շրջանակին պաշտառթերթը, որուն իմբրագրին ընարութիւնը կ'ենթարկուի կեդր. Վարչութեան վաւերացումին։

Յօդ. 67.— Շրջանակները, ըստ տեղական պայմաններու, կրնան անհնարի մէկ կամ աւելի Ենթաշրջանակներ՝ համապատասխան Վարչութիւններվ, որոնք կը վարեն Ենթաշրջանակին վերաբերեալ ընդհանուր գործերը և պատասխանաւու են Շրջանային Վարչութեան։

Յօդ. 68.— Շրջանային Վարչութիւնը պէտք է նախապէս կեդր. Վարչութեան հաւանութիւնը աստիճայ այն բոլոր ձեռնարկներուն համար, որոնք կուսակցութեան ընդհանուր քաղաքականութեան հետ կազ ունին և որոնք տեղական հանդումանք չունին։

Յօդ. 69.— Շրջանային Վարչութիւնը պարագի կեդր. Վարչութեան վաւերացման ենթարկել իր տարեկան պիւտածէն, և պիւտածէն մէջ չնախատեսուած այն ձեռնարկներն ու ծախքերը, որոնք կրնան մնածովէս խանգարել պիւտածէնն հաւասարակշուռթիւնը։

Գլուխ Ե.

Ընդհանուր Պատգամաւրական Փողով

Յօդ. 70.— Ընդհ. Պատգմ. Ժողովը Կուսակցութեան Գերագոյն, Օրէնսդիր և Համարառու մարմինն է։

Յօդ. 71.— Ընդհ. Պատգմ. Ժողովը կը կազմուի Կուսակցութեան բոլոր Շրջանակներէն ընտրուած պատգամաւրներէն։

Յօդ. 72.— Կուսակցութեան իւրաքանչիւր Շրջանակը իրաւունք ունի նշանակերու պատգամաւոր մը, ասկէ զատ Շրջանակները պատգամաւոր կը զրկեն նաև հետեւեալ համեմատութեամբ։

100 — 250	անգամ	1	պատգամաւոր
250 — 500	"	2	"
501 — 750	"	3	"
751 — 1000	"	4	"
1001 — 1500	"	5	"
1501 և աւելի	"	6	"

Յօդ. 73.— Նորոկողմ Ակումբը մը որ իր աշխարհագրութեան գիրքին թերմամբ չի կրնար կոսուիլ ուրիշ շրջանակի մը, կը մասնակցի Ընդհ. Պատգմ. Ժողովին իւր ուսնաձին Շրջանակ, պայմանաւ որ ունենայ առնուազն 25 անգամ, երբ այդ մասնակցութիւնը զուգագիլի իր կազմութեան առա-

ջին տարիին, և առնուազն 50 անգամ, երբ իր կազմութենէն ի վեր անցած են մէկէ տաւելի տարիներ:

Յօդ. 74.— Պատգամաւորներու ընտրութիւնը կը կատարուի Շրջանային Պատգմ. Ժողովներու կողմէ նոյն Ժողովին՝ համար ընտրուած պատաւիրակներուն թիւնն մեծամասնութեամբ:

Մյն պարագային որ Շրջանային Պատգմ. Ժողովներու կողմէ ընտրուած պատգամաւորներն ու փոխ-պատգամաւորները չկարենան մասնակցիլ Ընդհ. Պատգմ. Ժողովին, Շրջանային Վարչութիւնները և առաջարկի ցանկով պատգամաւորական թեկնածուներ կը ներկայացնեն Ակումբներու անդամական Ժողովներու քուէարկութեան:

Մէկ Ակումբով ներկայացուած Շրջանակ մը Ընդհ. Պատգմ. Ժողովին պատգամաւոր կ'ընտրէ իր անդամական Ժողովին մէջ:

Յօդ. 75.— Ընդհ. Պատգմ. Ժողովը կը գումարուի երեք տարին անգամ մը Կեդր. Վարչութեան կողմէ նշանակուած վայրին մէջ:

Յօդ. 76.— Արտասովլոր Ընդհ. Պատգմ. Ժողովը կը գումարուի:

Ա. Երբ Կեդր. Վարչութիւնը պէտք տեսնէ, իր անդամներու մեծամասնութեան քուէով: Այս պարագային հրաւիրագիրը

պէտք է կրէ Կեդր. Վարչութեան անդամներու երկու երրորդին ստորագրութիւնը:

Բ. Երբ Կուսակցութեան բոլոր Շրջանակներու երկու երրորդը գրաւորապէս կը պահանջէ, միեւնոյն առաջարկով:

Գ. Երբ Կեդր. Վարչութիւնը կը Կորսնցնէ իր մեծամասնութիւնը:

Արտասովլոր Ընդհ. Պատգմ. Ժողովը իր մասնաւոր նորատակը իրագործելէ յետոյ, կրնայ ուրիշ խնդիրներով ալ զբաղիլ, պատգամաւորներու մեծամասնութեան հուսանութեամբ:

Յօդ. 77.— Կեդր. Վարչութիւնը պարտաւոր է հրաւիրագիր զրկել, ինդիբներու ցանկով միասին, բոլոր Շրջանակներուն, Ընդհ. Պատգմ. Ժողովի գումարման թուականէն չորս ամիս առաջ:

Օրոկարգին պիտի ընկերանայ Շրջանակներու նիւթական, բորսյական և վիճակագրական աեցեկութիւնը ստոհմանաւորող հարցարան մը, որուն պատասխանը Շրջանային Վարչութիւնները պարտաւոր են Ընդհ. Պատգմ. Ժողովի գումարումէն մէկ ամիս առաջ հասցնել Կեդր. Վարչութեան:

Յօդ. 78.— Իւրաքանչիւր Շրջանակ պատգամաւոր կ'ընտրէ իր Շրջանակի անդամներէն և կամ ինարկին ուրիշ Շրջանակի պատկանող ընկերներէն, պայմանաւ որ ընտրելիութեան հանգամանքը ներկայացնեն:

Յօդ. 79.— Կեդր. Վարչութեան անդամներն եւս կրնան պատգամաւոր ընտրաւիլ Ընդհ. Պատգմ. Ժողովին համար, պայմանաւոր անոնք ձայն չունենան Վարչութեան համարատութեան առեն:

Յօդ. 80.— Իւրաքանչիւր. պատգամաւոր կրնաց ներկայացնել մէկ ձայն:

Յօդ. 81.— Ընդհ. Պատգմ. Ժողովը օրակարգի անցնելէ առաջ:

Ա. Կ'որոշէ իր ժողովական կանոններն ու ժողովի աեւսպութիւնը:

Բ. Կը գծէ Կուսանկցութեան ներքին և արտաքին քաղաքականութիւնը, որոշելով գործելուկերպի ընդհանուր գիծիրը:

Գ. Կը պահանջէ, կը քննէ և կը վաւերացնէ Կեդր. Վարչութեան, ինչպէս նաև Շրջանակներու ահզեկագիրներն ու հաշիւները:

Դ. Կը քննէ, կը դոսէ ու կը պատմէ Կեդր. Վարչութեան ամբաստանեալ անդամները, եթէ կան:

Ե. Կ'ընարէ Կեդր. Վարչութիւնը:

Զ. Կ'ընարէ Կեդր. Վարչութեան համար երեք փոխանդապաններ:

Է. Կը վերաքննէ Կեդր. Վարչութեան գաղափան վճիւները, եթէ բոլոքարկու կողմը գրաւորապէս ներկայացնէ իր բոլորը:

Ի. Կը քուեարկէ Կուսանկցութեան պիւտ-

ձէն և կ'որոշէ Շրջանակներու մասնակցութեան չափը:

Թ. Կը վերաքննէ ի հարկին ծրագիրը և Հիմնական Կանոնագիրը:

Յօդ. 82.— Ընդհ. Պատգմ. Ժողովը օրինաւոր է, երբ Շրջանակներու երկու երրորդը ներկայացնուած է և ըստ Յօդ. 71ի տրամադրաւթեան՝ ընարուելիք պատգամաւորներու ամբողջական թիւին կէսէն մէկ աւելին ներկայ է:

Յօդ. 83.— Ընդհ. Պատգմ. Ժողովին պատգամաւոր կ'ընարուին անոնք միայն, որոնք առնուազն երկու ասրի Կուսանկցութեան անդամ եղած են:

Նորակազմ Շրջանակները բացառութիւն կը կագմնին:

Յօդ. 84.— Ընդհ. Պատգմ. Ժողովի որոշումները կը արաւին ներկաներու մեծամանութեամբ՝ ի բաց ասեալ հետեւեալ ինդիրները, որոնց համար անհրաժեշտ է վասերացնուած պատգամաւորներու մեծամանութեան քուէն:

Ա. Ծրագրի և Հիմնական Կանոնագրի փոփոխութիւն:

Բ. Կեդր. Վարչութեան ընարութիւնն

Գ. Դասական վճիւներ:

Դ. Պիւտմէի քուեարկութիւնն

Ե. Ընդհ. քաղաքականութեան հարցեր:

Յօդ. 85.— Ընդհ. Պատգմ. Ժողովի ա-

ահնագրութիւններու ամփոփումը տպագրուած կը զրկուի Շրջանակներու պատուախանուառ մարմիններուն , Ակումբներուն բաննուելու համար:

Գլուխ Զ.

Անդրսնական Վարչութիւն

Յօդ. 86.— Կեդր. Վարչութիւնը կ'ընտրուի Ընդհ. Պատգմ. Ժողովէն , երեք առողուան համար , պատգամաւորներու բացարձակ մնածամանութեամբ և կը պաշտօնավորէ մինչեւ յաջորդին ընտրութիւնը:

Յօդ. 87.— Կեդր. Վարչութեան անդամները թէ՝ անհատապէս և թէ հաւաքարար պատասխանառու են Ընդհ. Պատգմ. Ժողովին :

Յօդ. 88.— Կեդր. Վարչութիւնը կը բաղկանայ անուուազն հինգ անդամներէ:

Երբ Կեդր. Վարչութեան անդամներէն մէկ կամ աւելին հասֆարին կամ պակսին , անոնց կը յաջորդին Ընդհ. Պատգմ. Ժողովին կողմէ ընտրուած , փոխ-անդամները՝ առաւելագոյն քուէի կարգով:

Երբ հրաժարող կամ պակսած անդամը կամ անդամները վճարեալ են , Կեդր. Վարչութիւնը համապատասխան թիւով եռապատիկ ցանկ մը կը զրկէ Շրջանակին Վարչութիւններուն , քուէարկուելու համար:

Իւրաքանչիւր Շրջանակի վերջին Ընդհ. Ժողովին մէջ ունեցած պատգամաւորներու թիւը չիմ կը կողմէ քուէարկութեամ , և առաւելագոյնով կ'ընտրուին թեկնածուները:

Եռապատիկ ցանկ կազմելու համար նախագամառութիւն կը արուի Վարչութեան ոչ-վճարեալ անդամներուն , երբ անոնք աըրամաղիր են վճարեալ գունալու և իրենց ամբողջ ժամանակը յանկացնելու Վարչութեան գործերուն:

Յօդ. 89.— Կեդր. Վարչութեան անդամները թէ՝ անհատապէս և թէ հաւաքարար պատասխանառու են Ընդհ. Պատգմ. Ժողովին :

Յօդ. 90.— Իւրաքանչիւր Ընդհ. Պատգմ. Ժողով կ'որոշէ յաջորդ շրջանի Կեդր. Վարչութեան պաշտօնավայրը:

Յօդ. 91.— Կեդրուական Վարչութիւնը ինք կ'ընարէ իր գիւտնը:

Յօդ. 92.— Կեդր. Վարչութիւնը , երբ հարկ գտնէ , կը նշանակէ լիազօ՞ներ , յանձնածողովներ և կը վարձէ քարտուզալներ , գործիչներ և ուրիշ պաշտօնեաներ , իր որոշումները գործադրելու և կուսակցութեան ընդհանուր գործերուն ընթացք առլու համար :

Յօդ. 93.— Կեդր. Վարչութիւնը կը վերաբնէ Շրջանակի մը Պատգամաւորական

Ժողովին դատական վճիռները, պայմանաւոր բոլոքարկուն դրաւորապէս ներկայացնէիր բոլոքը, արուած վճիռը թուականէն մինչեւ երեք տարի։

Յօդ. 94.— Կեդր. Վարչութեան հակառակութեան և պատասխանատութեան առկեր հրատարակուն Կուսակցութեան կեղծունական պաշտօնական հրատարակութիւնները։

Յօդ. 95.— Կեդր. Վարչութեան պաշտօննէ։

Ա. Գործադրել Ընդհ. Պատգմ. Ժողովին կողմէ քուէարկուած օրէնքներն ու որոշումները և վարել Կուսակցութեան ընդհանութեարձերը։

Բ. Կանոնաւոր յարաբերութեան մէջ ըլլուր բոլոր Շրջանակներուն հետ և անոնց հրահանգ տալ Կուսակցութեան ներքին և արտաքին քաղաքականութեան նկատմամբ։

Գ. Տնօրինել բրօբականուի միջոցներ՝ Կուսակցութեան սկզբունքները և քաղաքականութիւնը ընդհանրացնելու համար։

Դ. Ճշգել՝ ներշնչուելով Պատգմ. Ժողովի որոշումներէն և Կուսակցութեան հիմնական սկզբունքներէն՝ Կուսակցութեան տեսակէտն ու գիրքը հանդէպ պետական հարցերու։

Ե. Առնուազն միամսեայ շրջաբերականուներով Շրջանակները աեղեակ պահել Կու-

սակցութեան ընդհանութեար գործունէութեան և պետական խնդիրներու շաւրջ, իսկ եւսամըսեաց նիւթական աեղեկաստութիւն մը ընել։

Զ. Թերոգրութիւններ ներկայացնել Ընդհ. Պատգմ. Ժողովին, յաջորդ շրջանի ընդհանութեար պիտմէին համար։

Յօդ. 96.— Կեդր. Վարչութիւնը իրաւասութիւն ունի բեկանութու Շրջանային Վարչութիւններու որոշումները, երբ զանոնք Կուսակցութեան սկզբունքներուն հակառակ գանէ։

Յօդ. 97.— Կեդր. Վարչութիւնը իրաւասութիւն ունի լուծելու Շրջանային Վարչութիւն մը, երբ անոր ընթացքը, յետ ագգարարութեան, կը շորունակէ մնալ հակառակ Կուսակցութեան սկզբունքներուն և ընդհանութեար քաղաքականութեան։ Այդ պարագային Կեդր. Վարչութիւնը կը հրաւիրէ արատավոր Շրջանային Պատգմ. Ժողով, որ կ'ընարէ նոր Շրջանային Վարչութիւն։

Լուծուած Շրջանային Վարչութեան անդամները վերընտրելի են։

Յօդ. 98.— Կեդր. Վարչութեան անդամներն ու ներկայացուցիչները իրաւասութիւն ունին իրենց գանուած Շրջանակներու բոլոր պաշտօնական մարմիններու նիսաւերուն մասնակցիլ խորհրդակցական ձայնով։

Յօդ. 99.— Կուսակցութեան սեփական

շարժուն և անշարժ ստացուածքներու մաս
սակարաբութեան վերին իրաւասութիւնը կը
պատկանի Կեդր. Վարչութեան:

Երջանային Վարչութիւնները փոխա-
նորդաբար կը վայելին իրենց Երջանակնե-
րաւն սեփական շարժուն և անշարժ ստաց-
ուածքները մասամբարելու իրաւասութիւնը:


Յօդ. 100.— Կեդր. Վարչութեան անդամ-
ները պարախին ուխտել հաւատարմութիւն
կուսակցութեան սկզբունքներուն ու շահե-
րուն, և ստորագրել երդմանգիր մը:

Նրդմնագիր

“Ստանձնելով Ռամկալար Ազատական
Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան
անդամակցութիւնը, կ'երդնում պատույս
վրայ եւ հայրենիքին անունով՝ հաւատարմ
մնալ Ռամկալար Ազատական Կուսակցու-
թեան սկզբունքներուն, պահպանել եւ գոր-
ծադրել անոր ծրագիրն ու Կանոնագիրը,
խղճանքուն կատարել Ընդհ. Պատգամ. Փո-
ղովիին որոշումները եւ իր կողմէ ինձի վրա-
սահնուած պատօնը, աշալրջորեն նսկել Ռամ-
կալար Ազատական Կուսակցութեան շահե-
րուն վրայ եւ ջանալ անոր հաղաքական
հպատակներուն իրադրման, Հայ Ազգին եւ
Հայրենիքին բարիքին համար::”

Վերաբնութիւն

Յօդ. 101.— Հիմնական կանոնագիրը վե-
րաբննելի է Կուսակցութեան Ենթանուր
Պատգամամուռական ժողովին մէջ:



«Ազգային գրադարան



NL0199388

Amr

Printed by
SAHAG - MESROB Press
26 SHARIA TEYFIK CAIRO